

ՁԱՅՆԵՐ
ՔԱՂԱՔԻ
ՊԱՏԵՐԻՆՆ





Տեսնում ես: Շարունակում են քայլել՝ կարծես ոչինչ չի կատարվում: Բոլորը գիտեն, բոլորը մտածում են դրա մասին, բայց ոչ ոք ոչ մի բառ չի ասում:

Մեր քաղաքը նման է դատարկ կտավներով պատկերասրահի. ներսում իրականում ոչինչ չի կատարվում, բայց լի է չարտահայտված մտքերով:

Այսօր խոսելը վտանգավոր է, Մարիամ:

Նրանք մարդկանց լռեցնում են և ոչ մի ընտրություն չեն թողնում:



Մարդիկ միշտ ընտրության հնարավորություն ունեն, պարզապես ընտրում են ամենահեշտը:



Ուզում եմ լցնել այս պատկերասրահը, Դավիթ: Պատերը կլինեն մեր կտավներն ու կասեն այն, ինչ մարդիկ վախենում են ասել:



Չեմ հասկանում,
թե մարդիկ ինչ խնդիր ունեն
օդի աղտոտվածության մասին
խոսելու հետ: Տեսնում եմ, որ
օդը կեղտոտ է...

Որովհետև
այդպիսի քաջությունը
մարդկանց վնասում է:
Ինչո՞ւ ռիսկի դիմել:



Բայց դրա մասին
խոսելն արգելված չէ: Լռելը նույն
վախի այլ ախտանիշ է, որը
ստիպում է լռել մնացած ամեն ինչի
մասին: Նրանք պարզապես կարծում
են, որ լռելով կպահպանվի
խաղաղությունը:

Բայց անձայն
խաղաղությունը
պարզապես
հնազանդություն է:

Լռությունը, գուցե,
անվտանգ է թվում,
բայց ի վերջո՝ մարդկանց
առողջությանը վնաս է
հասցնում, քանի որ
աղտոտված օդ
են շնչում:



Աղջիկ ջան, այսպիսի գործերը լուրջ խնդիրների տեղից են տալիս:



Ի՞նչ խնդիրներ:

Ես շատ ցավ ու բռնություն եմ տեսել, երբ երիտասարդ էի: Մարդիկ ոչ միայն ֆիզիկապես էին կոտորված, այլև հոգիներն էին փշրված: Նրանցից խլել էին ապրելու և արտահայտվելու կամքը միայն այն պատճառով, որ բավականաչափ զգույշ չէին, ստվերում չէին մնում և իրենց մտքերն էին արտահայտում:






ԻՆՎԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՒՆԱԹՅԱՆ
ՄԵԶ Է

Սա իմ
աշխատանքն էր: Ինչպես
են համարձակվել:

Մարիան...



Նրանք աղմուկ
չեն ուզում: Նաև չեն
ուզում, որ մտածենք:
Մեր պատերը դեմ
գնացին նրանց
կանոններին, և հիմա
փորձում են լռեցնել
մեզ:

Մարիա՛մ, իսկապես ցավում եմ պատահածի համար, բայց հավատա՛ այսպես ավելի լավ է: Ուղղակի ներկել-փակել են, ու կարևորն այն է, որ դու այլևս վտանգի մեջ չես:

Սա հենց այնպես չի պատահել: Սա ինչ-որ մեկն է արել, սա մարդիկ են արել: Անվտանգ զգալու իմաստը ո՞րն է, եթե չեմ կարող խոսել այնպիսի պարզ բանի մասին, ինչպիսին օդն է, որ ամեն օր շնչում եմ:

Ինձ հարցնես՝ ավելի լավ է խաղաղության մեջ կեղտոտ օդ շնչել, քան ապրել մշտական վախով, որ քեզ հետ ինչ-որ բան կարող է պատահել:

Պետք է գնանք:




Երբ փորձեցի հրատարակել բանաստեղծություններս, ասացին, որ դրանք չափազանց տխուր են և կանհանգստացնեն մարդկանց:

Բայց երբեմն տխրությունն արտահայտվելն անհրաժեշտ է, որ քեզ ավելի լավ զգաս: Մտքերը մարդու կյանքի մի մասն են: Վտանգավորը ոչ թե արտահայտվելն է, այլ զգացմունքները զսպելը:



Աշխատանքս կորցրի մի մեջբերում հրապարակելու պատճառով, որն, ըստ նրանց, «չափազանց քննադատական» էր:

Նրանք չեն ուզում, որ մենք տարբեր զգացմունքներ ու տարբեր կարծիքներ ունենանք, որովհետև գիտեն՝ զգացմունքը դեպի միտք է տանում, իսկ միտքը՝ դեպի փոփոխություն:





Մենք ունենք արտահայտվելու
ազատություն, պարզապես քաջություն է
պետք այն օգտագործելու համար:
Ազատություն կա միայն այն ժամանակ,
երբ համարձակվում ենք այն
օգտագործել:

ՆԱՅԵՔ
ԱՍՂԵՐԻՆ:
ԴՐԱՆՔ ԱՎԵԼԻ ՊԱՅՃԱՌ
ԵՆ ԳԻՇԵՐԸ





Հիմա ոստիկանությունն է ներգրավվել, և կարծես ոչինչ չեն պլանավորում անել...

Վերանկողությունը փոխարինում է գրաքննությանը: Կարծում եմ՝ սա մեզ վերահսկելու նոր միջոց է: Նրանք հետևում են, բայց դեռ չեն միջամտում: Այն, ինչ կատարվում է, ավելի վտանգավոր է:

Առայժմ սրանք պարզապես խաղաղ ուղերձներ են, թողնք մնան: Մշակույթի գրասենյակը կվերահսկի:



Նրանք պարզապես սպասում են հարմար պահի, որ բռնեն քեզ: Ես անհանգստանում եմ քեզ համար, Մարիամ: Խնդրում եմ, դադարեցրո՛ւ: Դեռ ուշ չէ՝ հետ քաշվելու համար: Բավականաչափ գործել ես, մարդիկ նկատել են քեզ:



Դու չես հասկանում: Գուցե շատերը հոգու խորքում համաձայն են մեզ հետ, բայց դեռ շատ են վախենում դա ցույց տալ: Նրանք նույնիսկ չեն կարող կանգ առնել ու բացահայտ նայել մեր գործին, այլ միայն գաղտնի հայացք են գցում: Մեր նպատակն ինձնից մեծ է, և ես պատրաստ եմ վտանգել ապահովություն՝ դրան հասնելու համար:



Կարծիք արտահայտելը մեր իրավունքն է: Նրանք չեն կարող մեզ լռեցնել: Արվեստի միջոցով արտահայտման ազատությունը իրավունք է, ոչ թե իշխանության կողմից բարեհաճություն: Նրանք պարզապես փորձում են մեր թևերը կտրել, բայց չեն կարող խլել թռչելու մեր ցանկությունը:

Ես պարզապես վախենում եմ, որ սա կարող է քեզ վնասել: Սիրում եմ տեսնել, թե ինչպես ես արտահայտվում, այդ ժամանակ իսկապես երջանիկ ես թվում, բայց գիտեմ, թե սա ինչքան վատ կարող է ավարտվել: Մարդիկ ավելի քիչ համար են բանտարկվել...

Գնահատում եմ մտահոգությունը, բայց վստահիր՝ ես երբեք չեմ մոռանում ռիսկերի մասին: Մենք ստիպված ենք ավելի բարձր խոսել հենց որովհետև խոսել համարձակվողները դեռ հալածվում են: Ոչ միայն՝ որ մարդիկ կարողանան ազատ ապրել, այլև՝ որ չվատենք այդ քաջ մարդկանց գոհողությունները:

Չեմ կարծում, որ երբևէ կարող եմ այդքան քաջ լինել...

Ես գիտեմ, որ կարող ես, Դավիթ: Դու նույնպես վախենում ես, բայց վստահ եմ, որ մի օր պատրաստ կլինես հաղթահարել դա: Դեռ հետո է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, չէ:




Չգիտեմ... գուցե ճիշտ ես:



Մենք չենք փոխում համակարգը: Մենք ուզում ենք մարդկանց սովորեցնել, որ նրանք սեփական կարծիքի իրավունք ունեն: Մենք պաշտպանում ենք յուրաքանչյուրի՝ այլ կերպ մտածելու իրավունքը:

Արվեստը խաղաղ բողոք է՝ դիմադրության օրինական գործողություն: Մենք չենք կանգնեցնում նրանց, ովքեր ցանկանում են լռեցնել մեզ: Պարզապես ձայն ենք տալիս նրանց, ովքեր ուզում են խոսել: Սա մեր գլխավոր նպատակն է: Արվեստը մեր օրինական դիմադրությունն է:





Սա մարդիկ են անում:
Նրանք ովքեր կարծում են, որ մեր գործողությունները սարսափելի արդյունք կունենան: Նրանք կարծում են, որ ազատությունը քաոս է բերում:

Հասկանում եմ, թե ինչու են նրանք վախենում, բայց սա, ախր, սխալ է: Չես կարող արվեստի հետ այդպես վարվել, անգամ եթե համաձայն չես: Դա կեղտոտ ու նվաստացուցիչ է:





Երևի ճիշտ էիր՝
պետք է
դադարեցնենք սա:

Բայց ինչո՞ւ:
Այսքան ճանապարհ
ես անցել...

Զգիտեմ, Դավիթ...
Ուղղակի չեմ ուզում
ոչ մեկին վնասել:



Արվեստն
ինչպե՞ս կարող է
վնասել որևէ
մեկին:


Բայց դու
էիր ասում, որ
դադարեցնեմ,
խնդրում էիր, որ
չվտանգեմ ինձ:

Տեսնելով,
թե ինչքան ոգևորված էիր
նկարում, հասկացա... Դու միայն
ուզում էիր օգնել մարդկանց, նրանց
քաջալերել՝ խոսելու իրենց վախերի
մասին: Դադարեցնելու խնդրանքներս
ես սահիռություն էին, որովհետև աչքերիդ
կրակն այդ պայքարով էր վառ մնում: Ես
չեմ ուզում, որ հրաժարվես քեզ համար
այդքան կարևոր բանից միայն այն
պատճառով, որ ինձ պես մարդիկ
չափազանց կույր էին պայքարիդ
գեղեցկությունը տեսնելու
համար:





Ուրեմն պետք է նոր ինչ-որ բան ստեղծենք ու դրա մեջ դնենք մեր երբեմնի լռեցված մտքերն ու զգացմունքները: Պետք է այնքան անկեղծ մի բան ստեղծենք, որ մարդիկ պարզապես չկարողանան կողքով անցնել:






Երբ առաջին անգամ իմացա պատահածի մասին, առաջին մղումս ինքս ինձ մեղադրելն էր: Անընդհատ մտածում էի՝ ինչ կլիներ, եթե կանգնեցնեի նրան: Ի՞նչ կլիներ, եթե այդ գիշեր մնար Լիայի մոտ: Գուցե նրան չէին ձերբակալի...

Մինչ դատարանը կանցնի դատավճռի կայացմանը, ամբաստանյալը վերջին խոսքի իրավունք ունի:

Մարիամ, եթե ուզում եք խոսել, հիմա կարող եք:

Կարծում եմ՝ բոլորս գիտենք, թե ինչպիսին կլինի դատավճիռը, ուստի կասեմ միայն հետևյալը. ազատությունն ունի գին, և ես պատրաստ եմ վճարել այն: Կարող եք մի քանիսիս փողոցներից հանել, բայց շարժումն արդեն սկսվել է, մարդկանց չեք լռեցնի:

Բայց երբ տեսա, թե ինչքան անասան էր Մարիամը դատարանում, հասկացա. նույնիսկ եթե նա այլևս չի կարող նկարել քաղաքի պատերին, բայց դեռ պայքարում է խոսելու և լսելի լինելու մեր իրավունքի համար:



Մեր պայքարը
կշարունակվի, և վաղ թե
ուշ ստիպված կլինեք
հաշտվել այն մտքի հետ,
որ մենք չենք լռելու:



Այն, ինչից ամենաշատն էի
վախենում, արդեն կատարվել
է, բայց նրա ոգին ոչ մի պահի
չկոտրվեց:



Այդ պահին, տեսնելով նրա
անսասան կեցվածքը, վերջապես
հասկացա այն ամենը, ինչ նա
փորձում էր ինձ բացատրել հենց
սկզբից:

Դրանից հետո հասկացա, որ այլևս չեմ կարող լռել. պետք է ավարտեի նրա սկսածը: Գուցե ես նրա նման չեմ նկարում, բայց դա կարևոր չէ. կարևորն այն է, որ լռելն ինձ համար այլևս տարբերակ չէ:



ՔՈ ՋԱՅՆԸ՝ ՔՈ ԻՐԱՎՈՒՆԵՐ
ՔՈ ԼՈՒՈՒԹՅՈՒՆՆԸ՝ ՆՐԱՆՑ ՀԱՂԹԱՆԱԿ



Ես հավաքեցի՝ ում հնարավոր էր, և միասին ավարտին հասցրինք այն ուղերձը, որը Մարիամն ու Լիան էին սկսել: Կարծում էի, թե լռությունն ինձ կպաշտպանի, բայց հենց լռությունն էլ մեզ հասցրեց այս կետին, և ես թույլ չեմ տա, որ մեր ձայները կրկին մարեն:



Կգա ժամանակը, երբ բոլորը կառերեսվեն ճշմարտությանը. մենք ազատ արտահայտվելու իրավունք ունենք: Արվեստը միշտ հաղթանակի ճանապարհ է գտնում. այն կարող է ձայն բարձրացնել նույնիսկ նրանց մեջ, ովքեր իրենց ամբողջ կյանքում միայն շշնջացել են:

Այս կոմիքսը ստեղծվել է «Երիտասարդների հզորացում հանուն ժողովրդավարության շայաստանում և Վրաստանում» ծրագրի մասնակիցների կողմից:

Ծրագիրն իրականացվել է ՕքսեՋեն հիմնադրամի կողմից՝ համագործակցությամբ Գորիի Երիտասարդական կենտրոնի (Վրաստան) հետ՝ Նոր ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ:



ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Թամար Մուսերիձե
Վիկտորյա Մելիքյան

ՄԵՆԹՈՐ

Կարեն Այվազյան

ԽՄԲԱԳԻՐ

ԵՎ ՆԿԱՐԻՉ

Տարոն Անտոնյան



Թե ինչպես է
ազատ խոսքը
սահմանափակվում
ճնշումներով և սոցիալական
նորմերով, և թե ինչպես
են հաղթահարվում այդ
սահմանափակումները՝
արվեստի, համերաշխության,
քաղաքացիական քաջության և
տարբերվող կարծիք արտահայտելու
իրավունքի ամրապնդման շնորհիվ:

Ոգեշնչված է Մարդու իրավունքների
Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածից,
որը պաշտպանում է խոսքի ազատությունը և
գեղարվեստական ստեղծագործությունները
թե՛ ուղղակի գրաքննությունից,
թե՛ անուղղակի ճնշումներից: